ԳՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Արարատ ԱՂԱՍՅԱՆ, Արվեստի պատմություն. կերպարվեստ, գիրք առաջին, Երևան, «Արմավ», 2020, 256 էջ*:

Բանալի բառեր – արվեստի պատմություն, կերպարվեստ, նախնադարյան արվեստ, միջնադարյան կերպարվեստ, ուսումնական ձեռնարկ:

«Գիրքը լավն է, եթե հեղինակը նրանում արտահայտում է միայն այն, ինչ պետք է, և այնպես, ինչպես պետք է»:

Արիստոտել



ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի գիտական խորհրդի որոշմամբ, ՀՀ ԿԳՄՍ նախարարության նախաձեռնությամբ ու ֆինանսավորմամբ 2020 թվականին լույս տեսավ «Արվեստի պատմություն. կերպարվեստ» ուսումնական ձեռնարկը: Ուրախալի է, որ վաղուց սպասված այս աշխատության հեղինակն է բնագավառի լուրջ ու բազմավաստակ մասնագետ՝ ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, ՀՀ արվեստի վաստակավոր գործիչ, իր բազմամյա գիտաստեղծագործական գործունեությամբ հայ արվեստագիտության մեջ մեծ ավանդ բերած մտավորական, մեկ ու կես տասնյակ թեկնածուական ատենախոսությունների գիտական ղեկավար, արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր Արարատ Աղասյանը, ով նաև տողերիս հեղինակի դասախոսն էր և գիտական ղեկավարը:

Դասագիրքը նախատեսված է արվեստի դպրոցների և գեղարվեստական ուսումնարանների սաների համար:

Սույն աշխատությունը եզակի, խիստ արդիական և մեզանում իրապես նշանակալի երևույթ է:

2003-ին Երևանում լույս տեսավ Մ. Կուզմինայի և Ն. Մալցևայի խմբագրությամբ «Արտասահմանյան արվեստի պատմություն» ռուսալեզու դասագրքի (1983) հայերեն թարգմանությունը (թարգմ.՝ Մ. Երզնկյանի, Վ. Սուքիասյանի, գլխավոր խմբագիր՝ Լ. Ներսիսյան), որը բովանդակում է արտասահմանյան երկրների կերպարվեստի պատմությունը՝ սկսած նախնա-

* Ընդունվել է տպագրության 05.02.2021:

դարից մինչև XX դարի կեսերը[1]: Գրքի մեջտեղում զետեղված էին սև-սպիտակ էջադիր վերատպություններ:

Մեծ անհրաժեշտություն էր զգացվում նոր՝ թարմացված և ժամանակակից ձեռնարկի, և նորեկ ձեռնարկը, որը, փաստորեն, հայերեն լեզվով շարադրված ոչ թարգմանական առաջին դասագիրքն է, լրացնում է այդ բացը: Գիրքն սկսվում է ներածությունից, որում տրվում է *արվեստ* հասկացության բնութագիրը, բացատրվում է գեղարվեստական ոճի նշանակությունը, խոսվում է արվեստի տեսակների մասին, ներկայացվում են արվեստի դասակարգման ընդունված հիմնական եղանակները և սկզբունքները, հանգամանալից և մատչելի լուսաբանվում են կերպարվեստի ժանրերը՝ ենթաժանրերով, և տեսակները՝ իրենց տարատեսակներով, պարզաբանվում են դրանց հիմնական առանձնահատկությունները՝ տեխնիկան, կիրառվող նյութերը, խնդիրները և ֆունկցիաները:

Հեղինակը ժամանակագրական հաջորդականությամբ ներկայացնում է կերպարվեստը՝ սկսած նախնադարից մինչև գոթական շրջան: Ակնառու նորարարություն է հայկական կերպարվեստը համաշխարհային կերպարվեստի համատեքստում ներկայացնելու գաղափարը: Այսպես, եվրոպական նախնադարյան կերպարվեստի առանձնահատկությունների, պատմական շրջափուլերի և հուշարձանների կողքին քննվում է նախնադարյան Հայաստանի կերպարվեստը (գլուխ Ա), Հին Եգիպտոսի և Միջագետքի կողքին՝ Ուրարտուինը, Հին Հունաստանի և Հին Հռոմի կերպարվեստի պատմությանը զուգահեռ՝ Հին ու Հելլենիստական Հայաստանինը (Գլուխ Բ), Արևելաքրիստոնեական երկրների՝ Բյուզանդիայի և Ռուսաստանի (Գլուխ Դ), ինչպես նաև Արևմտյան Եվրոպայի միջնադարյան կերպարվեստին (Գլուխ Ե) համաքայլ առանձին ենթագլուխներով ներկայացվում է միջնադարյան Հայաստանի քանդակագործությունը, որմնանկարչությունը և մանրանկարչությունը (Գլուխ Դ): Գրքում առանձին գլուխ է նվիրված նաև Հեռավոր Արևելքի (Հնդկաստան, Չինաստան, Ճապոնիա) և Մերձավոր Արևելքի (Պարսկաստան) երկրների հին և միջնադարյան կերպարվեստին (Գլուխ Գ): Նման մոտեցումն առավել ցայտուն է դարձնում տարբեր երկրների մշակութային տարբերություններն ու նմանությունները, հնարավորություն է ընձեռում ճանաչել, համեմատել և զատորոշել հայկական մշակույթը համաշխարհայինի համատեքստում և արժևորել այն: Ուշագրավ է, որ լուսանցքներում հեղինակն առանձին դեպքերում մատնանշում է հայկականը համաշխարհայինի հետ կապող թելերը (տե՛ս էջ 127, 132, 179, 182, 189): Այսպես, ձեռնարկը սերմանում է ազգային արժանապատվության և հպարտության զգացում, որը հենվում է օբյեկտիվ և փաստական նյութերի վրա:

Գրքի առավելություններից է ճոխ լեզուն՝ մասնագիտական հարուստ տերմինաբանությամբ, երբ միջազգային տերմինի կողքին ներկայացվում է հայերեն համարժեքը/ները, ինչն ընթերցողին հայերեն մասնագիտական

[1] Տե՛ս Արտասահմանյան արվեստի պատմություն, Երևան, «Զանգակ-97», 2003, 476 էջ:

բառապաշարը հարստացնելու հնարավորություն է տալիս, ինչպես նաև մտքերը ճիշտ և գեղեցիկ հայերենով շարադրելու օրինակ է ընծայում:

Արժեքավոր նորարարություն է նաև ձեռնարկի լուսանցքներում զետեղված բացատրական բառարանը: Նշենք, որ ցայսօր մեզանում բացակայում է արվեստաբանական տերմինների հայալեզու բառարան: Թվում է, թե հեղինակը մասամբ լուծում է նաև այդ լուրջ խնդիրը: Ընթերցողներին պարզաբանելով կերպարվեստին, դեկորատիվ-կիրառական արվեստին, ճարտարապետությանը վերաբերող տերմինները, կրոնական և դիցաբանական կերպարների և խորհրդանիշերի իմաստն ու նշանակությունը, դիցաբանությունից սերող այլաբանական արտահայտությունները, ներկայացնելով ուշագրավ վարկածներ, երևան հանելով հետաքրքիր առնչակցություններ և պատմելով նկարիչների կենսագրության մասին՝ հեղինակը միևնույն ժամանակ լուծում է նաև կրթական կարևոր խնդիր, այն է՝ սովորեցնում է հասկանալով ճանաչել, խորամուխ լինել, ինքնուրույն ըմբռնել, բացահայտել, և հետևաբար՝ ինքնուրույն մտածել: Հիշենք գերմանացի մանկավարժ, քաղաքական գործիչ Ադոլֆ Դիստերվեգի խոսքը՝ «Կրթությունը գիտելիքների քանակը չէ, այլ լիակատար ըմբռնումն ու հմուտ կիրառումն այն ամենի, ինչ գիտես»:

Չծանրաբեռնված, ամփոփ, համակարգված, տեղեկատվապես հարուստ և թարմացված (նշվում են քաղաքների նաև ժամանակակից անվանումները, հուշարձանների հետ կապված վերջերս տեղի ունեցած պատմական իրադարձությունները), հանրագիտարայնորեն հստակ, գիտականորեն ճշգրիտ գրվածքը պարզ է և հասկանալի: «Այս դասագիրքը ակադեմիական ոճով է գրված՝ հստակ և պարզ, շարադրանքը տպավորիչ է ու մտապահվող, բերված փաստերն ու նրանց տրված բացատրությունները ճշգրիտ են»[2],- սույն ձեռնարկի մասին իր գրախոսականում նկատում է ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Աելիտա Դոլուխանյանը: Միևնույն ժամանակ՝ սա սոսկ գիտելիքների շտեմարան չէ: Հեղինակը ներկայացնում է կերպարվեստի զարգացման պատմական և հասարակական նախադրյալները, բացատրում կրոնական և աշխարհայացքային առանձնահատկությունները, շեշտում պատճառահետևանքային կապերը, ցույց տալիս արվեստի գործը վերլուծելու, դրա թեմատիկ ու ոճական առանձնահատկությունները տեսնելու և բացատրելու եղանակները, բնութագրում դարաշրջանը և գերիշխող գեղարվեստական ոճը: Հիմքում՝ արվեստաբանության մեջ լայնորեն կիրառվող նկարագրական, քննական-համեմատական, պատկերագրական և պատկերաբանական մեթոդներն են:

Դասագրքի յուրաքանչյուր գլուխը եզրափակում են հեղինակի կազմած հարցերը, որոնք փաստական են և վերլուծական՝ օգնում են առանձնացնել առաջնայինը երկրորդայինից, կենտրոնանալ հիմնականի վրա, կարևոր հենակետեր են նյութը յուրացնելու և մտապահելու համար:

Ձեռնարկի ակնբախ առավելություններից են տեքստամիջյան գունա-

---

[2] **Դոլուխանյան Ա.,** Սպասված դասագիրք՝ կերպարվեստի մասին, «Գիտություն», Երևան, 2021, № 6 (354), հունիս, էջ 7:

վոր և որակյալ մեծաքանակ (շուրջ 280) վերատպությունները, որոնք ոչ միայն պատկերազարդում, առավել հասկանալի և հիշարժան են դարձնում շարադրանքը, այլև ինքնուրույն արժեք են ներկայացնում, քանզի ձևավորում են գեղագիտական ճաշակ: Յուրաքանչյուր վերատպություն ուղեկցում է գրություն՝ արվեստի գործի հեղինակի անունով, վերնագրով, թվագրությամբ և այսօրվա պահպանման վայրով: Վերջինս նմանատիպ ձեռնարկների համար ուշագրավ և հետաքրքիր նորամուծություն է:

Նորամուծություն են նաև տեքստն ուղեկցող ֆիլմերը, որոնք ընտրել և տեղադրել է ձեռնարկի խմբագիր Արմեն Ավանեսյանը: Լուսանցքներում զետեղված է շտրիխկոդ, որի միջոցով կարելի է youtube-ով դիտել շուրջ 80 ուսուցողական ֆիլմ՝ հայերեն և ռուսերեն լեզուներով: Դրանց դիապազոնը բավականին լայն է՝ այստեղ կան և՛ վիդեոդասագրքի դասեր, և՛ անիմացիաներ, և՛ հանրամատչելի-ճանաչողական վավերագրական ֆիլմեր, և՛ լուրջ մասնագետների, այդ թվում՝ ՌՍՖՍՀ արվեստի վաստակավոր գործիչ, անվանի արվեստաբան Պ. Վոլկովայի, պրոֆեսոր Ա. Մակարովի և այլոց դասախոսությունները, որոնք բացահայտում են խոր փիլիսոփայական շերտեր: Թվում է, թե դրանք օգտակար կլինեն նաև ուսուցիչների համար: Լայն է նաև ֆիլմերի թեմատիկ ընդգրկումը՝ դրանք տեղեկություններ են տալիս հայկական և համաշխարհային արվեստի, մշակույթի, առանձին հուշարձանների, ականավոր վարպետների, պատմական դարաշրջանների և իրողությունների, տարբեր երկրների ու ժողովուրդների, դիցաբանական աստվածների և հերոսների, պատմական նշանավոր դեմքերի և թագավորական տոհմերի մասին: Ընդհանրապես նման մոտեցումը, որը քննարկվող նյութը ներկայացնում է ավելի լայն համատեքստում, կամ հակառակը՝ այն նեղացնում է ու խորացնում, նոր հարցադրումներով հետաքրքրություն է առաջացնում, երևույթը դիտարկում է տարբեր ասպեկտներով, կայուն հիմք է բարեկիրթ, մտածող և լայնահայաց սերունդներ կրթելու համար:

Հիշարժան է նաև ձեռնարկի դիզայնը, որն իրականացրել է Արամ Ուրուտյանը: Հետաքրքիր գաղափար է տեքստում կանաչ գույնով ընդգծել այն բառերը, որոնց բացատրությունները տրվում են լուսանցքներում, և շեղատառ կարմիրով նշել վերատպություններն ուղեկցող գրությունները:

Ձեռնարկը եզրափակվում է 15 անուն հանձնարարվող գրականությամբ՝ հայերեն, ռուսերեն և անգլերեն լեզուներով:

«Երեխայի ուսուցման նպատակն է նրան ընդունակ դարձնել հետագայում զարգանալու առանց ուսուցչի օգնության», - ժամանակին ասել է ամերիկացի անվանի փիլիսոփա Էլբերթ Հաբարդը: Սույն ձեռնարկը՝ իր գործիքակազմով, հնարավորություն է տալիս զարգանալու նույնիսկ առանց ուսուցչի օգնության: Թվում է, թե իր հանրագիտարանային ընդգրկունությամբ, ակադեմիական ճշգրտությամբ, հղկված լեզվով և բացատրական բառարանով այն ուսումնական ձեռնարկի ընդունված ձևաչափից շատ ավելի լայն է: Այս ինտերակտիվ, հետաքրքիր ու արդիական ձեռնարկը եզակի է ոչ միայն մեզանում, այլև միջազգային պրակտիկայում:

Սրտանց շնորհավորում ենք հեղինակին և ընթերցողներին նման երևույթի լույսընծայման առիթով, հուսով ենք, որ հաջորդ երկու գրքերը,

որոնք կներառեն համաշխարհային և հայ կերպարվեստի պատմությունը Վերածննդից մինչև մեր օրերը, լույս կտեսնեն հնարավորինս մոտ ապագայում: Հուսով ենք նաև, որ գրախանութներում արվեստասեր լայն հանրության համար դրանք նույնպես հասանելի կդառնան…

Խոսքս ուզում եմ ավարտել Դենի Դիդրոյի հետևյալ տողերով. «Իրականում հանրագիտարանի նպատակն է հավաքել աշխարհով մեկ ցաքուցրիվ գիտելիքները, համակարգել դրանք՝ հասանելի լեզվով և փոխանցել նրանց, ովքեր կգան մեզանից հետո, որպեսզի նախորդ դարերի աշխատանքն անիմաստ չդառնա հաջորդ դարերի համար, որպեսզի գիտելիքներով հարստացած մեր սերունդները… չանհայտանան՝ չհասցնելով ծառայել գալիք սերունդներին»:

Ուրախալի է, որ մեզանում նման պատասխանատու գործը բարձր պրոֆեսիոնալիզմով և հիմնարար մոտեցմամբ իրականացրել է Արարատ Աղասյանը: Մաղթում ենք, որ նրա բեղուն գրիչը երկար աշխատի ի շահ հայ արվեստաբանության, մասնագետների, աշակերտ-ուսանողների և արվեստասեր լայն շրջանակների:

Մարգարիտա ՔԱՄԱԼՅԱՆ
արվեստագիտության թեկնածու,
ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի գիտքարտուղար